

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի, 2020 N 27

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՏՈՂ, ՏՈՒՄԻ ԵՎ ՄՈԽՐԵՆԵՍ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Արցախի Հանրապետության Հադրուֆի շրջանի Տող, Տումի և Մոխրենես համայնքներում կիրառել հետևյալ սահմանափակումները.

1) Սահմանել Հադրուֆի շրջանի Տող, Տումի և Մոխրենես համայնքների վարչական սահմանները ներառող ընդհանուր տարածք մուտք գործելու և ելք կատարելու հատուկ ռեժիմ՝ արգելելով անձանց և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքը՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության ապրանքների, պարագաների, սննդամթերքի, դեղորայքի, վառելիքի մատակարարման նպատակով անձանց տեղաշարժի և Պարետի ցուցումով՝ բացառիկ այլ դեպքերի.

2) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված Տող, Տումի և Մոխրենես համայնքների վարչական սահմանները ներառող ընդհանուր տարածք մուտք գործելու սահմանափակման համար բացառություն սահմանել մինչև 2020 թվականի հունիսի 14-ը՝ ժամը 12:00-ն՝ թույլատրելով Տող, Տումի և Մոխրենես համայնքներում մշտական բնակության իրավունք ունեցող կամ փաստացի բնակվող անձանց մուտքը.

3) Հատուկ ռեժիմի իրականացումն ապահովելու նպատակով ԱՀ ազգային անվտանգության ծառայության կողմից սահմանված վայրում տեղադրել հատուկ անցակետ՝ անձանց ու տրանսպորտային միջոցների շարժը վերահսկելու նպատակով.

2. ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ ապահովել սույն որոշման պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողություն:

3. ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ երկօրյա պարբերականությամբ Պարետին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ընթացիկ իրավիճակի վերաբերյալ:

4. ԱՀ առողջապահության նախարարին, ԱՀ ոստիկանության պետին, ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենին, ԱՀ Հադրուֆի շրջանի վարչակազմի ղեկավարին, ԱՀ Հադրուֆի շրջանի Տող, Տումի և Մոխրենես համայնքների ղեկավարներին՝ օժանդակել ԱՀ ազգային անվտանգության ծառայության՝ սույն որոշմամբ սահմանված գործառույթների կատարմանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունիսի 13-ին՝ ժամը 14:00-ին:

  
  
Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ